

-Ես եմ՝ Սադայէ՛լը... միակ խորհրդատուդ, որ քեզ հանեցի նեղութենէ, թշուառութենէ, անկուտութենէ: Ինձմէ զատ՝ ուրիշ ընկերներ չունենաս: Չըլլայ որ եկեղեցի, դպրոց, հիւանդանոց կամ որքանոց շինես: Ամէն բարիքէ չարիք կը ծնի, ինչպէս կ'ըլլայ ընդհակառակն: Առուտուր ըրած ատենդ չմոռնա՛ս Աստուծոյ եւ սուրբերուն անունները բերանդ առնել ու երդնուլ անոնցմով: Հանգստութեան օրը մտքեդ հանէ: Անկա ծոյլի օր է: Միակ հանգստութիւնը դրամ շահելուն մէջ կը կայանայ: Եօթներորդ օրն ալ աշխատէ, այլ մանաւանդ՝ աշխատոցուր: Քանի մը ոսկի աւելի շահիլդ նայէ: Ոչ ոք գործ չի հիմներ՝ ուրիշները ապրեցնելու համար, այլ՝ ինքը ապրելու համար փառաւորապէս: Իրաւ է, որ վեց օրուան մէջ շինուեցան երկինքն ու երկիրը, սակայն եօթներորդ օրը ծախու հանուեցան: Երկիրը ես՝ սադայէլս, գնեցի, ու երկինքը կողոպտեցին հրեշտակները: Վաճառականութեան մէջ ոչ հայրդ ճանչցիր, ոչ ալ մայրդ, ապա թէ ոչ՝ մարդ քեզ չի ճանչնար: Մարդոց հոգին իրենց քսակին մէջն է: Վարպետ շնաբան մը եղիր. վաճառատանդ վերի յարկը շուն մը պահէ ու միշտ կրկնէ յաճախորդիդ առջեւ. «Շունէն ցած ըլլամ, եթէ սուտ կը խօսիմ»: Գողութիւն մը՝ ըներ... երբ քնացած ես: Դրացիիդ դէմ սուտ վկայութիւն ընելէ մի՛ քաշուիր, եթէ այդ կը պահանջէ նուիրական շահդ: Մի՛ ցանկար դրացիիդ տանը, այլ անոր խանութիւն ցանկա, մի՛ ցանկար դրացիիդ կնոջը, այլ՝ անոր աղջկան, դրացիիդ ծառային կամ աղախնին մի՛ ցանկար, այլ՝ անոնց ստացած ամսականներուն, մի ցանկար դրացիիդ եզին, այլ՝ անկէ պատրաստուած ապուխտին, անոր իշուն մի՛ ցանկար, իսկ եթէ ցանկաս, գնէ՛ սատկած իշու գնով ու, զայն ներկելով, ծախէ երիտասարդ աւանակի արժէքով:

Կեսարացին, հեշտագին համբերութեամբ, մինչեւ խոր ծերութիւն հաւատարմօրէն կը գործադրէ սատանային պատուիրանները:

Օր մըն ալ, յանկարծ, կ'այլափոխուի Կեսարացին: Կը բռնէ սատանան, կը խոթէ պարկը ու կը կապէ: Եւ կը սկսի ափերով ոսկի տալ, երբեմն նոյնիսկ իր ամբողջ ունեցածը տալ՝ ազգօգուտ գործերու համար:

Ուրեմն Կեսարացին շատ ալ գէշ մարդ մը չէ, թէեւ իրմէ աղէկները կարելի է գտնել... դժոխքին մէջ: